## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » հուլիսի 2020թ. № 71-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 10.07.2020Թ. ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով.

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Լոռի Բերդ համայնքի ավագանու 2020թ. հուլիսի 10-ի թիվ 71-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները .

11) Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքում հողագրունտի և ավազախճի հանույթի աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ

11) Մեկ անձից գնում կատարելու մասին

12) Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի «Խոտերի թումբ» կոչվող հանդամասի հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու վերաբերյալ

13) Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրի բնակչին Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեից գումար տրամադրելու վերաբերյալ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2020թ. հուլիսի 20**

**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » հուլիսի 2020թ. № 72-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՎԵՐԴԼՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-101-005-014 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ N1236276) ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղում գտնվող 06-101-005-014 ծածկագրով (վկայական N1236276) անշարժ գույքին տրամադրել ՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Սվերդլով, 7-րդ փող., 2-րդ փակուղի թիվ 3 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2020թ. հուլիսի 22
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22» հուլիսի 2020թ. № 73-Ն

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերով և առաջնորդվելով Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջում փոփոխություններ կատարելու մասին ավագանու 2020թ. հուլիսի 21-ի թիվ 32-Ն որոշմամբ՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեի եկամուտների և ծախսերի բաշխումը:

2. Հաստատել համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների 2020թ. բյուջեի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2020թ. հուլիսի 22
գ. Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

« 24» հուլիսի 2020թ. № 74-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0032-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ N1723052) ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0032-0002 ծածկագրով (վկայական N1723052) անշարժ գույքին տրամադրել ՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ագարակ, 22-րդ փողոց, 7 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2020թ. հուլիսի 24
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 24» հուլիսի 2020թ. № 75-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0051-0024 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ N1723908) ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0051-0024 ծածկագրով (վկայական N1723908) անշարժ գույքին տրամադրել ՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ագարակ, 2-րդ փողոց, 2-րդ փակուղի, 7 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2020թ. հուլիսի 24**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2020թ. № 76-Ա

### Հ-34, Մ-3-ՍՏԵՓԱՆԱՎԱՆ-ՊՐԻՎՈԼՆՈՅԵ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ (ՌԻՍԿ.III-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ) ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ Կմ5+000-կմ18+000 ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02/02/2002 թվականի N91 որոշումով, հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի դիմումը.

**Որոշում եմ.**

1. Օրենսդրությամբ սահմանված կարգով տալ շինարարության թույլտվություն Հ-34, Մ-3-Ստեփանավան-Պրիվոլնոյե-Վրաստանի սահման միջպետական նշանակության (ռիսկ.III-րդ աստիճանի) ավտոճանապարհի Կմ5+000-կմ18+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**     **Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2020թ. հուլիսի 24**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հուլիսի 2020թ. № 77-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐ ՉՈՐԲԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-009-0037-0028 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0.0091 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՈԽԱԴՐԵԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

Հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի բնակիչ Արթուր Չոբանյանի դիմումը, ՀՀ կառավարության 04.08.2005թ. թիվ 1455-Ն որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի բնակիչ Արթուր Չոբանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-009-0037-0028 ծածկագրի տակ գտնվող 0.0091 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը այլ հողեր գործառնական նշանակությունից փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2020թ. հուլիսի 24
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

« 27» հուլիսի 2020թ. № 78-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ 06-025-0112-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ N1676402) ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի 06-025-0112-0002 ծածկագրով (վկայական N1676402) անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Բովաձոր, 9-րդ փողոց, թիվ 1 անասնաշենք փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2020թ. հուլիսի 27**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

« 27» հուլիսի 2020թ. № 79-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0018-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ՎԿԱՅԱԿԱՆ N1799900) ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0018-0006 ծածկագրով (վկայական N1799900) անշարժ գույքին տրամադրել ՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, բնակելի տուն 15 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

**2020թ. հուլիսի 27**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«31» հուլիսի 2020թ. № 80-Ա

### ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՂԴԱՆ ԳՅՈՒՂԻ 06-079-0025-0010 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յաղդան գյուղի բնակչուհի Տանյանիկոլայի Արգիևայի կողմից ներկայացված դիմումը, 14.07.2020թ. թիվ 2101 սեղանամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, 21.12.1995թ. տրված անշարժ գույքի սեփականության վկայագիրը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0025-0010 ծածկագրում գտնվող 1282.6 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0025-0010 ծածկագրով հողամասի մակերեսը 1282.6 քմ

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1282.6 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց բաժնային սեփականության իրավունքով, հավասար մասերով վերահատկացնել՝ Տանյա Նիկոլայի Արգիևային և Գեորգիոս Գեորգիադիսին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրանց բաժնային սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան գյուղի 06-079-0025-0010 ծածկագրով՝ 4-րդ փողոց տուն 27 հասցեի բնակելի կառուցապատման 1282.6 քմ մակերեսով հողամասի վրա մինչև 15.05.2001թ. ( 1970-1996թթ.) կառուցված՝ բոլոր շինությունները ճանաչել օրինական և որպես հավասար բաժնային սեփականություն ճանաչել Տանյա Նիկոլայի Արգիևայի և Գեորգիոս Գեորգիադիսի բաժնային սեփականության իրավունքը:

4. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք Յաղդան գյուղի 06-079-0025-0010 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Յաղդան 4-րդ փողոց, թիվ 27 բնակելի տուն փոստային հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2020թ. հուլիսի 31**
**գ. Լոռի Բերդ**